

# Սեպտեմբեր Հայ ժողովրդի պատմության մեջ

## 1 սեպտեմբեր - Գիտության օր

570 Կնքվում է հայ-բյուզանդական դաշինքը:

1387 Լենկ-Թեմուրի զորքը պաշարում է և գրավում Վանի բերդը:

1860 Կ. Պոլսում հիմնվեց «Համազգային ընկերությունը» Միքայել Նալբանդյանի ակտիվ մասնակցությամբ:

1860 Կ. Պոլսում հիմնվում է Հայոց Բարեգործական ընկերությունը:

1997 ԼՂՀ-ում կայացած նախագ ահական ընտրություններում հաղթեց ԼՂՀ արտագործնախարար Արկադի Դուկասյանը:

## 2 սեպտեմբեր

1991 Ստեփանակերտում ԼՂԻՍ մարզային և Շահումյանի շրջանային խորհուրդների համատեղ նիստում հռչակվեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը:

1991 Արցախի տեղական օրենսդրական խորհուրդները միացյալ ընդունեցին «Լեռնային Ղարաբաղի հանրապետության հռչակումը», որն Արցախը հայտարարեց Ադրբեջանից անկախ (Շահումյան մարզը ներառյալ): Սա համապատասխանում էր 1990 04 03-ի խորհրդային «ԽՍՀՄ-ի կազմից խորհրդային հանրապետությունների դուրս գալու ընթացակարգի օրենք»-ին, որն ինքնավար մարզերին իրավունք էր տալիս անկախանալ հանրապետություններից, որոնց կազմում եղել են, եթե տվյալ հանրապետություններն անկախացել էին:

## 3 սեպտեմբեր

1826 Շամխորի ճակատամարտում ռուսական բանակը հաղթանակ է տանում պարսիկների դեմ՝ գեներալ Վ. Գ. Մադաթովի հրամանատարությամբ:

## 4 սեպտեմբեր

1890 Վանաձորում ծնվեց հայ անվանի գրող Ստեփան Զորյանը: (Վախճ. 1967թ.-ին):

1993 Արցախում բնակվող հայ բնակչության դեմ երկար ժամանակ շարունակվող հրետանային ռմբակոծություններից պաշտպանվելու համար Արցախի ուժերի կողմից (սկիզբը 1993 07 23) Ադդամի, Ջիբրայիլի և Հորադիզի պաշտպանական գ ուղիների ստեղծումն ավարտվեց:

## 5 սեպտեմբեր

1835 Պարսկաստանի Սալմաստ գավառի Փայաջուկ գյուղում ծնվեց հայ մեծ վիպասան Բաֆֆին (Հակոբ Մելիք-Հակոբյան): (Վախճ. 1888թ.-ին, Թիֆլիսում):

1923 Ծնվեց արձանագործ, նկարիչ և մանկավարժ Սարգիս Բաղդասարյանը: Նրա «Մենք ենք մեր սարերը» - «Ղարաբաղցիներ» հուշարձան կոթողը (1967) արցախյան ազատագրական շարժման և նոր պետականության խորհրդանիշը դարձավ: (Վախճ. 2001)

## 7 սեպտեմբեր

493 Սահազավ Ամենայն Հայոց կաթողիկոս Ս. Սահակ Պարթևը: Նա ծնվել է նույն օրը 80 տարի առաջ:

## 8 սեպտեմբեր

1701 Կ. Պոլսում հիմնվեց Մխիթարյան Միաբանությունը:

1914 Հայտարարվեց հայ կամավորական խմբեր ստեղծելու մասին:

## 9 սեպտեմբեր

1922 Իզմիրում սկսվեց հայ և հույն բնակչության կոտորածը քենական կանոնավոր զորքի կողմից:

## 10 սեպտեմբեր

1869 Փոքր Ասիայում Կուտինա գյուղաքաղաքում ծնվեց Կոմիտասը (Սողոմոն Սողոմոնյանը): (Վախճ. 1935թ.-ին, Փարիզում):

1896 Հայերի զանգ վածային կոտորածներ սկսվեցին Ալևում:

1896 Վարդգեսի և Վարդանի ղեկավարությամբ սկսվեց Վանի երկրորդ կռիվը:

## 11 սեպտեմբեր

1836 Կ. Պոլսում ծնվեց կոմպոզիտոր, հայկական առաջին օպերայի ստեղծող Տիգրան Զուխաջյանը: (Վախճ. 1898թ.-ին, Զմյուռնիայում):

1836 Վենետիկում բացվեց մխիթարյանների Ռաֆայելյան վարժարանը:

## 12 սեպտեմբեր

1795 Ուրա-Մուհամադ-խան Կաջարը գրավում է Թիֆլիսը:

1801 Ալեքսանդր Լ-ի մանիֆեստով Արևելյան Վրաստանը միացվում է Ռուսաստանին: Վրաստանի հետ Ռուսաստանին են միացվում Լոռի, Փամբակ, Ղազախ, Բորչալու գավառները:

1828 Ռուսական զորքերը և հայկական աշխարհագրորդ գրավում են Թոփրախ-կալեն և ազատագրում Ալաշկերտը:

## 13 սեպտեմբեր

1399 Լենկ-Թեմուրը սկսում է իր երրորդ արշավանքը դեպի Հայաստան և մինչև 1403 թ. նվաճում ողջ Անդրկովկասը, Փոքր Ասիան, Միջագետը և Սիրիան:

1406 Կարա-Յուսուֆը պարտության է մատնում Աբուբարդին և գրավում է Թավրիզը:

1826 Գեներալ Պասկևիչի գլխավորած ռուսական 8 հազարանոց զորքը Ելիսավետպոլի մոտ ջախջախում է Աբաս Միրզայի 25 հազարանոց բանակը:

## 14 սեպտեմբեր

1915 Սուեիցիայի՝ Մուսա լեռան, քառասունօրյա հերոսամարտի սկիզբը:

## 15 սեպտեմբեր

1939 Սկսվեց «Սասունցի Դավիթ» էպոսի 1000-ամյակի տոնակատարությունը:

## 16 սեպտեմբեր

1822 Կ. Պոլսում ծնվեց հայ նշանավոր վիպասան, հրապարակախոս Ծերենցը Հովսեփ Շիշմանյան: (Վախճ. 1888թ.-ին, Թիֆլիսում):

1943 Գերմանական զավթիչների դեմ մղված մարտերում զոհվեց խորհրդային Միության հերոս Հունան Ավետիսյանը: (Ծնվ. 1914 թ.-ին):

1980 Շարք մտավ Արփա-Սևան ստորգետնյա ջրամբարի գլխամասային հանգույցը՝ Կեչուտի ջրամբարը:

## 18 սեպտեմբեր

484 Հալիկառնասում (այժմ Բողոում, Թուրքիա) ծնվեց հույն պատմաբան Հերոդոտը: Նա իր «Անաբասիս» գրքում գրել է հայերի մասին: (Վախճ. մ.թ.ա. 425թ.-ին):

1820 Հակասութթանական ցույցին մասնակցելու մեղադրանքով մի խումբ հայեր (կեսարացի Հակոբը, Գրիգոր Սքաբյանը, Դելի Բաղդասարը և այլն) մահապատժի են ենթարկվում Կ. Պոլսում:

## 19 սեպտեմբեր

1883 Ծնվեց հայ կոմպոզիտոր, իրավաբան Ռոմանոս Մելիքյանը: (Վախճ. 1935թ.-ին):

1918 Արարայի (Պաղեստին) ճակատամարտը: Արևելյան (Հայկական) լեզոնի մարտիկների հաղթանակը թուրքական զորքերի դեմ:

1918 Հայկական լեզոնը մղեց Արարայի հաղթական ճակատամարտը:

1956 Բյուրականի աստղադիտարանի հանդիսավոր բացումը:

## 20 սեպտեմբեր

1908 Ծնվեց Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Առաքինը: (Վախճ. 1994թ.-ին):

1918 Բաքվի 26 կոմունարների գնդակահարությունը անդրկասպյան ավազուտներում:

1990 ԼՂՀ Մարտունի քաղաքը և շրջանը գ ըրող ադրբեջանական ուժերը ջախջախիչ հակահարվածով ետ շարտվեցին Ելման դիրքերը:

1992 Արցախը, իր անկախության ճանաչման ակնկալիքով դիմեց Միացյալ Ազգերի Կազմակերպությանը (ՄԱԿ), Անկախ Պետությունների Համագործակցությանը (ՄԴՀ) և այլ պետություններին, որը սակայն հաջողություն չունեցավ:

## 21 սեպտեմբեր

1942 Հայկական 89-րդ հրաձգ ային դիվիզիան Գրոզնու տակ մարտական գ ործողություններ է սկսում գերմանա-ֆաշիստական զավթիչների դեմ:

1991 Հայաստանի անկախության օրը:

## 24 սեպտեմբեր

1890 Սարգիս Կուկունյանի խումբը անցավ թուրքական սահմանը:

## 25 սեպտեմբեր

1944 Երևանում մահացավ անվանի հայագետ, ակադեմիկոս Մանուկ Աբեղյանը: (Ծնվ. 1865թ.-ին):

## 26 սեպտեմբեր

1829 Դորպատի (այժմ Տարտու) համալսարանի պրոֆեսոր Ֆրիդրիխ Պարրոտի հետ Խ. Աբովյանը սկսում է վերելք դեպի Արարատի գագաթը:

27 սեպտեմբեր

1920 Լուծարքի ենթարկվեց Ֆրանսիայի կառավարության որոշմամբ կոտորածներից ազատված հայ տարագիրներից կազմված կանավորական Արևելյան Լեգեոնը, որը կռվելու էր Թուրքիայի դեմ և դառնալու էր ապագա հայկական բանակի կորիզը Կիլիկիայում:

28 սեպտեմբեր

1864 Առաջին ինտերնացիոնալի հիմնադրումը:

1874 Էջմիածնում բացվեց Վերոյան ճեմարանը:

29 սեպտեմբեր

1921 ՌՍՖՍՀ Կենտրոնական ղեկըտ է ընդունում ճախկին Լազարյան ճեմարանը «խորհրդային Հայաստանի կուլտուրայի տուն վերանվանելու և նրա բոլոր նյութական ու կուլտուրական արժեքները խորհրդային Հայաստանի կառավարության տրամադրության տակ ղնելու մասին»:

1929 Երևանում մահացավ բանաստեղծ Հովհաննես Հովհաննիսյանը: (Ծնվ. 1864թ.-ին):

30 սեպտեմբեր

1895 Սկսվեց Կ. Պոլսում ապրող հայերի կոտորածը:

1895 Կ. Պոլսում հայոց մայր եկեղեցու բակում հնչակյանները կազմակերպեցին բողոքի ցույց՝ «Մայիսյան ծրագրի» իրագործման պահանջով: Ցույցը կոչվեց Բաբ Ալիի ցույցը:

1915 Ուրֆայի հայերի գոյամարտը:

1919 Ծնվեց հայ բանաստեղծ Վերոյ Էմինը: (Վախճ. 1998թ.-ին):

# Լուրեր Իրանահայ համայնք

- **Երևանում բացվեց իրանահայ ճարտարապետներին նվիրված ցուցահանդես**

Երեւան, 19 Օգոստոսի, ԱՐՄԵՆՊԵՄ: Իրանի հայկական հարցերի ուսումնասիրության կենտրոնի եւ Հայաստանի ճարտարապետության ազգային բանգարան-ինստիտուտի նախաձեռնությամբ քանգարանում այսօր բացվեց իրանահայ երեք ճարտարապետների Փոլ Աբգարին, Գաբրիել Գեւորգյանին եւ Վարդան Հովհաննիսյանին նվիրված ցուցահանդես, որտեղ ներկայացված են նրանց ստեղծած կառույցների նախագծեր, արդեն կառուցված շենքերի լուսանկարներ: Ցուցահանդեսը կգործի մեկ ամիս:

1908թ-ին ծնված Փ.Աբգարը Իրանում մոդեռնիզմի ուղղության ներկայացուցիչներից էր, իր նախագծերում մեծ նշանակություն էր տալիս բնության հետ ներդաշնակությանը: Նրա կառույցները համարվում են Թեհրանի լավագույն շինությունները, որոնցից կարելի է նշել «Նիսաբադ» կինոսրահը, Իրանի առաջին ռադիոկայանը, հայ կաթոլիկ համայնքի եկեղեցին, խուլ եւ համրերի «Բաղչեբան» դպրոցը եւ մեծ թվով առանձնատներ, որոնցից մեկն այսօր ծառայում է որպես Իրանում Հայաստանի Հանրապետության դեսպանատուն:

Գ.Գեւորգյանը նախագծել է մի շարք առանձնատներ, հյուրանոցներ, խանութներ եւ նկարչական արվեստանոցներ: 1926թ. բացել է իր անձնական ճարտարապետական գրասենյակը, իրանական «Architectured aujaurd'hui» ամսագրի հիմնադիրներից է: Գեւորգյանի հյատնի գործերից են Թեհրանի արդարադատության, արտաքին գործերի նախարարությունների, սպաների ակումբի շենքերն ու այլ կառույցներ: Սասնակցել է մի շարք միջազգային մրցույթների, որոնցից կարելի է նշել Ռուզվելտի հուշարձանի նախագիծը:

Ոճական իմաստով Վ.Հովհաննիսյանն իր աշխատանքներում հետեւել է մոդեռնիզմի ուղղությանը, սակայն, գեղեցկությունը տեսել է պարզության մեջ: Նրա լավագույն գործերից են Օրիորդաց արվեստի ուսումնարանը, Թեհրանի երկաթուղային կայարանի եւ «Դարբանդի» հյուրանոցները, Սադաբադի պալատը, «Մետրոպոլ» եւ «Դիանա» կինոսրահները, «Ֆերդոսի» հյուրանոցը, «Սեփահ» բանկի կենտրոնական շենքը Թեհրանում, ինչպես նաեւ կառույցներ մի քանի այլ

քաղաքներում, մի շարք առանձնատներ եւ հասարակական պետական շենքեր: Հայաստանում Իրանի դեսպանատան հասարակայնության հետ կապերի եւ մշակութային հարցերի բաժնի պատասխանատու Մոհամա Զանդը նշեց, որ ժողովուրդների իրար հասկանալու եւ համերաշխ ու արժանավայել ապրելու գրավականը միմյանց արժեքները ճանաչելու ու հարգելու մեջ է: «Սեր ազգերից յուրաքանչյուրը, պահելով ու փայտալուծելով իր մշակույթը, կրոնն ու ինքնուրույնությունը, միաժամանակ պետք է ընդունակ լինի մյուսի հետ հարաբերվելու, խոսելու եւ մտքեր փոխանակելու, ինչն էլ կարելու խթան կհանդիսանա երկու երկրների բարեկամության ամրապնդման համար», -ասաց նա:

- **Շուրջ 4000 ուխտավորների մասնակցությամբ կատարվեց Ս. Թադեի վանքի եռօրյա ուխտագնացությունը**

Ատրպատականի ազգային իշխանությունների հովանավորությամբ, թեմակալ առաջնորդ Ս. Նշան ծ. վրդ. Թոփուլյանի նախագահությամբ եւ թեմի Ուխտագնացության գործադիր հանձնախմբի նախաձեռնությամբ հուլիսի 31-ից մինչեւ օգոստոսի 2-ը կատարվեց Ս. Թադեի վանքի 49-րդ ուխտագնացությունը: Ուխտագնացությանը մասնակցում էին Ուրմիո հոգեւոր հովիվ Ս. Վարազ վրդ. Թոփալյանը եւ Թավրիզի ծխատեր քահանա Ս. Ներսես Պասիլյանը:



- **Ս. Աստածածնի վերափոխման տոնը ու խաղողօրհները Թեհրանի եկեղեցիներում**

Օգոստոսի 17-ին, Թեհրանի Ս. Աստածածնի վերափոխման տոնի առիթով Թեհրանի բոլոր հայ եկեղեցիներում մատուցվեց ս. պատարագ եւ կատարվեց խաղողօրհներ: Վերափոխման տոնը Հայ եկեղեցու հինգ մեծ տոներից է եւ այս իսկ պատճառով հատուկ պարտություններով է նշվում:

## Իրան

**Իրանում 3,5 բալ ուժգնության երկրաշարժ է տեղի ունեցել**

Թեհրան, 13 Օգոստոսի, ԱՐՄԵՆՊԵՄ: Այսօր գիշերը ըստ Ռիխտերի սանդղակի 3,5 բալ ուժգնության երկրաշարժ է տեղի ունեցել Իրանի Յազդի նահանգում: Թեհրանի համալսարանի երկրաֆիզիկական կենտրոնի տվյալների համաձայն, երկրաշարժի էպիկենտրոնը գտնվում էր Տաբաս քաղաքից 40 կիլոմետր դեպի հյուսիս: Չոհերի մասին հաղորդումներ չեն եղել:

- **Իրանի առումակայանի համար միջուկային վառելիքը պատրաստ է Ռուսաստանից Բուշեր առաքելու համար**

ՄՈՍԿՎԱ, 22 Օգոստոսի, ԱՐՄԵՆՊԵՄ: Իրանի առումակայանի համար նախատեսված միջուկային վառելիքը պատրաստ է Ռուսաստանից Բուշեր ուղարկելու համար: Ինչպես ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի թղթակցին հաղորդել են Ռուսաստանի առումային Էներգիայի նախարարությունում, «Բուշերի Էներգաբլոկի փորձարարական գործարկման եւ նրա հետագա աշխատանքի համար միջուկային վառելիքը պատրաստված է եւ պահվում է Նովոսիբիրսկում «ՏՎԷԼ» բաց բաժնետիրական ընկերության պահոցներում»:

- **ԻԻՀ խորհրդարանի պատգամավորները ՀՀ Ազգային ժողովում**

ԵՐԵՎԱՆ, 21 Օգոստոսի, ԱՐՄԵՆՊԵՄ: Օգոստոսի 21-ին ՀՀ ԱԺ նախագահ Արթուր Բաղդասարյանն ընդունեց Իրանի Իսլամական Հանրապետության խորհրդարանի պատգամավորների պատվիրակությանը: Ինչպես հայտնեցին ՀՀ ԱԺ հասարակայնության հետ կապերի վարչությունից, հանդիպման ընթացքում քննարկվել են երկու երկրների միջխորհրդարանական կապերի ամրապնդման խնդիրները: Նշվել է, որ Հայաստանի նորընտիր խորհրդարանում արդեն ստեղծվել է ԻԻՀ-ի խորհրդարանի հետ պատգամավորական բարեկամության խումբ, իսկ Իրանում նախապատրաստվում են խորհրդարանական

ընտրությունների, որոնց արդյունքում ձեւավորված նոր խորհրդարանում արագ կստեղծվի համանման խումբ: Եւթել է նաեւ համահայկական պատգամավորական վեհաժողովի ստեղծման նախաձեռնության մասին, որին կանգնակցեն այլ երկրների խորհրդարանների հայազգի պատգամավորները եւ Հայաստանի Ազգային ժողովի հետ բարեկամական խմբերի նախագահները: Հանդիպման ընթացքում կարեւորվել են երկու երկրների միջպետական ու միջխորհրդարանական կապերի հետագա խորացումն ու ընդլայնումը, որ բխում է տարածաշրջանային համագործակցության շահերից:

### Հայաստան

- **Ռոբերտ Քոչարյան. «Համահայկական խաղերը Հայաստանի եւ Սփյուռքի միասնության խորհրդանիշն են»**

Երեւան, 18 Օգոստոսի, ԱՐՄԵՆՊԵՍ : Օգոստոսի 16-ի երեկոյան ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանը Երեւանի «Հրազդան» մարզադաշտում, բազմահազար հանդիսատեսների ներկայությամբ, Համահայկական երրորդ խաղերը հայտարարեց բացված: Ջերմորեն շնորհավորելով խաղերի բոլոր մասնակիցներին եւ հյուրերին, ՀՀ նախագահը նշեց, որ Համահայկական խաղերը Հայաստանի եւ Սփյուռքի միասնության, աշխարհի ամբողջ հայության ուժի եւ կայունության խորհրդանիշն են: Նա հաջողություններ մաղթեց մարզիկներին, նշելով, որ այս միջոցառումն անմոռաց տպավորություններ եւ հիշողություններ կթողնի բոլոր ներկաների սրտերում:

Երեւանի քաղաքապետ Երվանդ Չախարյանը, նույնպես ջերմորեն շնորհավորելով 3-րդ համահայկական խաղերի բոլոր մասնակիցներին եւ հյուրերին, նշեց, որ «Երեւանը շատ ուրախ է նորից իր հովանու տակ վերցնել աշխարհի ամբողջ հայությանը միացնող Համահայկական խաղերը»: Նա հույս հայտնեց, որ այս մրցաշարը, նախորդների նման, կամրապնդի Հայաստանի եւ Սփյուռքի միջեւ աճող կապերը, նոր հուշեր եւ բարեկամություն կպարզեի նրանց: Քաղաքապետը ներողություն խնդրեց մայրաքաղաքի հուլիսից, Երեւանում լայնածավալ շինարարական աշխատանքների հետեւանքով ստեղծված որոշ անհարմարությունների համար, նկատելով, որ աշխատանքների ավարտից հետո Երեւանն ավելի գեղեցիկ եւ հյուրըկնկալ կդառնա:

Ժամը 21.00-ին սկսվեց Համահայկական 3-րդ խաղերի մասնակիցների հանդիսավոր շքերթը՝ 31 երկրների 79 քաղաքների պատվիրակները պատվո զորք կատարեցին եւ իրենց տեղերը զբաղեցրին կանաչ խաղադաշտում: Փոքր-ինչ ուշ օլիմպիական խաղերի, աշխարհի եւ եվրոպայի չեմպիոն-մարզիկներ 1992 թվականի Բարսելոնի օլիմպիադայի չեմպիոն, Երեւանցի հրաձիգ Հրայրյա Պետրիկյանի գլխավորությամբ, մարզադաշտ բերեցին եւ բարձրացրին խաղերի դրոշը, իսկ օլիմպիական չեմպիոն մոսկվաբնակ բասկետբոլիստուհի Էլեն Բունիսթյանց-Շաբիրովան բոցավառեց Գառնիի տաճարից բերված խաղերի ջահը: Հանդիսավոր շքերթից հետո մարզադաշտում ներկաներն էստրադային համերգի հանդիսատեսներ դարձան, միջոցառումն ավարտվեց տոնական հրավառությամբ: Մինչեւ օգոստոսի 24-ն Երեւանը դարձավ Համահայկական 3-րդ խաղերի մայրաքաղաքը:

Նշենք, որ համագային խաղերն ամբողջ աշխարհում եզակի երեւոյթ են: Հայաստանը միակն է ամբողջ հետխորհրդային տարածքում, որը, չնայած իր ոչ այնքան բարենպաստ տնտեսական վիճակին, արդեն երրորդ անգամ նման լայնածավալ միջազգային մարզական միջոցառում է կազմակերպում, որը ոչ միայն մեծ մարզական, այլ նաեւ միջազգային, քաղաքական նշանակություն ունի:

Խաղերի ծրագրում ընդգրկված են 10 մարզածեւեր, առաջին անգամ Հայաստան են այցելել Թբիլիսի քաղաքի եւ Ջավայխի մարզիկները, Ռուսաստանի Սուլեյմոզորսկ, Կեմերովո եւ այլ քաղաքների ներկայացուցիչները: 79 քաղաքներից 14-ը ներկայացնում են Հայաստանի բոլոր մարզերի քաղաքները ընդհանուր թվով 1700 մարզիկ: Լեռնային Ղարաբաղն ուղարկել է Ստեփանակերտը, Շուշին, Մարտակերտը ներկայացնող 80 մարզիկ: Լոս Անջելեսից այս անգամ այցելել է ընդամենը 9

մարզիկ, բայց Ստամբուլից՝ 80, Վիեննայից՝ 58 մարզիկներ եւ այլն: Մասնակիցների ընդհանուր թիվը կազմում է 3 000, որոնցից 1300-ը Սփյուռքից: Ներկա են Փարիզի, Բյուրսելի, Մարսելի, Բուենոս-Այրեսի, Սան-Պաուլոյի, Սոնրեայի, Տորոնտոյի, Մայնի Ֆրանկֆուրտի, Մանչեսթերի, Մոսկվայի, Սանկտ-Պետերբուրգի, Ախալքալակի, Նինոսմինդայի, Կրասնոդարի եւ բազմաթիվ այլ քաղաքների պատվիրակներ:

- **ԱՄՓՈՓՎԵՑԻՆ ՀԱՍՈՒՄՆԱԿԱՆ ԽԱՂԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

Համահայկական 3-րդ խաղերի եզրավակիչ օրը ՀՀ ԱԳՆ-ում Համահայկական կոմիտեն ամփոփիչ ասուլիս էր իրավորել: Խաղերի համաշխարհային կոմիտեի նախագահ, Հայաստանի արտգործնախարար Վարդան Օսկանյանն ամփոփելով մեկշաբաթյա մրցումների արդյունքները, հայտարարեց, որ, չնայած որոշ թերություններին, Համահայկական 3-րդ խաղերը կազմակերպվել էին պատշաճ մակարդակով: Մրցումներն անցկացվել են նորմալ պայմաններում, նկատելի էր մարզիկների վարպետության աճն ու նրանց լուրջ վերաբերմունքը խաղերի նկատմամբ: Հատկապես սուր մրցակցությունում անցան բասկետբոլի, վոլեյբոլի, ֆուտբոլի եւ սեղանի թեմիսի մրցաշարերը: Բացի մարզական մրցակցությունից, Համահայկական 3-րդ խաղերը նպաստեցին նաեւ հայրենիքսպիյուռը կապերի հետագա ամրապնդմանն ու խորացմանը:



Այս ամենը նկատի ունենալով, Վարդան Օսկանյանը հանդգնում էր հայտնեց, որ Համահայկական 3-րդ խաղերն իրոք կայացած են: Նա նշեց, որ այժմվանից խաղերի համաշխարհային կոմիտեն պետք է մտածի հաջորդ 2007 թ. կայանալից 4-րդ խաղերի կազմակերպման եւ անցկացման մասին: Կոմիտեն ներկայումս քննարկում է տարբեր աշխարհամասերում Համահայկական խաղերի կազմակերպման մասին նկատի ունենալով սփյուռքահայերի ֆինանսական եւ այլ խնդիրները: Քննարկվում է նաեւ բասկետբոլի առանձին մրցաշար անցկացնելու հնարավորությունը: Քայլեր են ձեռնարկվում խաղերի «աշխարհագրությունն» ընդլայնելու, մրցումների ծրագրում նոր մարզածեւեր ընդգրկելու, պրոֆեսիոնալ մարզիկներին խաղերին մասնակից դարձնելու ուղղությամբ: Նշված հարցերը քննարկման թեմա կդառնան 2004 թ. մարտին Բեյրութում կայանալիք համաշխարհային կոմիտեի համագումարում:

- **Ամբերդի աջ ափին հայտնաբերվել է բրոնզեդարյան ժամանակաշրջանի քաղաք-տաճար**

Երեւան, 20 Օգոստոսի, ԱՐՄԵՆՊԵՍ : ԳԱԱ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի կողմից, ամերիկյան «Գֆոելեր» հիմնադրամ-ընկերության հայկական մասնաճյուղի ֆինանսական աջակցությամբ, Արագածոտնի մարզի Ագարակ եւ Ոսկեհատ գյուղերի մեջտեղում, Ամբերդ գետի աջ ափին, 2001թվականից իրականացվում են հնագիտական պեղումներ: Շուրջ 200 հա տարածք զբաղեցնող լանդշաֆտի վրա հայտնաբերվել է կուր-արաբսյան մշակույթի բրոնզեդարյան ժամանակաշրջանի պաշտամունքային կառույցների համալիր՝ բացօթյա ժայռակերտ քաղաք-տաճար:

Գտնված հուշարձանը բազմաշերտ է: Գտածոները վկայում են, որ մարդն այս տարածքում բնակվել է վաղ բրոնզեդարյան, մ.թ.ա. 17-16-րդ դարերում, երկաթե դարում, Վանի թագավորության շրջանում, հելլենիստական շրջանում, միջին դարերում, բնակեցման վերջին փուլը եղել է պարսկական տիրապետության շրջանը մ.թ. 18-րդ դար:

Ըստ արշավախմբի ղեկավար, հնագիտության ինստիտուտի գիտաշխատող Պավել Ավետիսյանի,

պեղումների արդյունքում փորված շուրջ 5 մետր խորության տակ բացվել է փողոց, որի երկու կողմերում ընկած են կանոնավոր հատակագծով շինություններ: Հայտնաբերվել են Ալեքսանդր Մակեդոնացու և Օգոստոս Օկտավիանոսի պատկերներով արծաթե դրամներ, խեցու բեկորներ, որոնք կհամաժամանակեցվեն արդեն եղած հուշարձանների հետ: Տարածքում գտնված կաղապարի մնացորդները վկայում են մետաղագործական արհեստների գոյության մասին: Պ. Ավետիսյանի խոսքերով, կառույցների ճարտարապետական լուծումներն իրենցից ներկայացնում են Արարատյան, Շիրակի դաշտավայրերին և նախալեռնային շրջաններին բնորոշ շինարվեստի սինթեզ:

Պաշտամունքային լամդաֆտի ցամաքային դրսեւորումներ ունի խեթական, փյոյուզիական մշակույթը, սակայն, եթե դրանք վերագրվում են մթա12-11-րդ դարերին, ապա Ազարակում հայտնաբերվածը վաղ բրոնզեդարյան (4-րդ հզր. կեսերից մինչև 3-րդ հզր վերջը) ժամանակաշրջանին: Հնագետի համոզմամբ, այս գտածոները գալիս են հաստատելու, որ սրանք ցամաքային կառույցների ամենավաղ տարբերակներն են, որը առաջ է քաշում բազմաթիվ նոր հարցադրումներ և գիտական լուրջ խնդիրներ: Արշավախմբի ղեկավարը նշեց, որ արդեն հայտնաբերվել և արձանագրվել է շուրջ 40.000 կտոր իր: Դրանցից առավել արժեքավորները կուսումնասիրվեն մասնագետների կողմից, կուղարկվեն վերականգնման, ապա կտրամադրվեն համապատասխան թանգարաններին, իսկ մյուս մասը կվերաթաղվեն հնավայրի տարածքում:

Հնագետներին անմիջական աջակցություն է խոստացել Ազարակ այցելած ՀՀ նախագահ Ռեբերտ Քոչարյանը:

Ներկայումս 118 հա տարածքը վերածվել է բացօթյա արգելոց-թանգարանի, նախատեսվում է այստեղ շենք կառուցել, ուր կտեղավորվեն գտածոները: Հնագիտության ինստիտուտն այս հարցում համագործակցում է Հուշարձանների պաշտպանության վարչության, «Քարտեզագրման և զեոդեզիայի կենտրոն» ՓԲԸ-ի հետ: Վերջինիս մասնագետները արդեն պատրաստել են 5000 քմ սանրված տարածքի ճարտարապետական գծագրերը:

Աշխատանքներն իրականացվում են արշավախմբի 5 օրկատմերի կողմից, որտեղ ընդգրկված են 6 հնագետներ և 2 օգնականներ, նաև երկրաբաններ, ճարտարագետներ, բանվորներ, որոնք հիմնականում տեղի բնակիչներ են և, երկար ժամանակ աշխատելով արշավախմբի հետ, ձեռք են բերել որոշ մասնագիտական հմտություններ:

«Գֆոելեր» հիմնադրամն իր վրա է վերցրել բոլոր ֆինանսական խնդիրները. կատարում է հողահեռացման աշխատանքները, արշավախմբին տրամադրում է գործիքներ, այլ պիտույքներ: Պ. Ավետիսյանը կարելու է արշավախմբի աշխատանքներին ելույթապահ մասնագետների մասնակցությունը, ինչը, նրա խոսքերով, հնարավորություն կտա մեր ազգային արժեքների մասին տեղյակ պահել գիտական աշխարհին:

2004 թվականին դաշտային աշխատանքները կընդմիջվեն գտածոները մշակելու: Նպատակով, որի վերաբերյալ կպատրաստվի գիտական աշխատություն:

### Միջազգային

• **ՄԱԿ-ի ԿՈՆՎԵՆՅՈՒՆ ԿԻՐՈՒԵԼԻ Է ՀԱՅՈՑ ՑԵՂԱՄԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՐ**

ՏՈՐՈՆՏՈ, ԿԱՆԱԴԱ, 22 ՕԳՈՍՏՈՍ, ՆՈՅՅԱՆ ՏՊՊԱՆ: ՄԱԿ-ի 1948 թ. Ցեղասպանության կոնվենցիան լիովին կիրառելի է 1915-1923 թթ. Հայոց ցեղասպանության նկատմամբ, և թուրքիան պատասխանատու է փոխհատուցման համար: Այս մասին ասել է միջազգային իրավունքի փորձագետ, դոկտոր Ալֆրեդ դե Ջայասը վերջերս հրապարակված մի հուշագրում: Ինչպես հայտնում է ՀՀ Դաշնակցության Հայ դատի Կանադայի գրասենյակը, ՄԱԿ-ի նախկին պաշտոնատար ղե Ջայասն ընդգծել է, որ Հայոց ցեղասպանությունը ենթակա չէ վաղեմության ժամկետի սկզբունքին: Ոչ հանցագործներին պատժելու իրավունքի, ոչ էլ թուրքիայի փոխհատուցման պարտավորության վրա չի

տարածվում վաղեմության ժամկետի սկզբունքը, ասել է դե Ջայասը: Դե Ջայասը եվրոպական ու հյուսիսամերիկյան համալսարաններում դասավանդում է միջազգային իրավունք: Նա վերջերս է պաշտոնաթող եղել որպես ՄԱԿի Մարդու իրավունքների հանձնաժողովի քարտուղար 22 տարի աշխատելուց հետո, և ներկայումս ՄԱԿ-ի Ժնևի կենտրոնակայանում Նշանակումների և առաջխաղացման հանձնաժողովի անդամ է: Դե Ջայասն անդամակցում է նաև Միջազգային P.E.N. ակումբին, Միջազգային իրավունքի ամերիկյան ընկերությանը և Քրեական իրավունքի միջազգային ընկերակցությանը: Ալֆրեդ դե Ջայասը օգոստոսի 27-ին դասախոսությամբ հանդես կգա Տորոնտոյի հայկական համայնքի կենտրոնում:

## ՋԵՄԱԼ ՓԱՇԱՅԻ ՄՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

(6)

### ԻՆՉՊԵՍ ԿԱԶՄԱԿԵՐՊԿԵՑ ՈՒ ԻՐԱԳՈՐԾԿԵՑ ՋԵՄԱԼ ՓԱՇԱՅԻ ՄՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Այն ժամանակներում հայ հայրենասերների միտքը հուզող ու պելեծող այսպիսի հարցերի շուրջը երկար վիճելով, բացատրվելով ու մտորելով, Արտաշեսն ու Պետրոսը հոգնած կանգ են առնում Մուխրանսկի կամրջի վրա:

- Պետք է գնալ Հայաստան, թե ու թիկունք լինել կառավարության, այդ այժմ նույնպես կարելու է ինչպես ճակատներում կռվելը... Այ, ես կգնամ հայաստան և կխնդրեմ, որպեսզի մեր գյուղացի երիտասարդներին տրամադրվի թեկուզ երկրի ամենահեռավոր ու ամենավերակ, խոպանացած անկյուններից մեկը:

Այդտեղ մեր երիտասարդական ամբողջ ուժը, արյունը, տղուները ի սպաս դնելով կստեղծենք նոր օջախ, նոր կենցաղ, նոր տնտեսածեւ, միանգամայն ներհակ անցյալին... Այն կլինի խարոխված հեղափոխության ու գիտության նվաճումների վրա: Ռեկրահայում կան այդպիսի տնտեսություններ, և կոչվում են կոմունա:

Հանված կամրջի երկաթյա բաղրիքներին, Արտաշեսն ու Պետրոսը մի պահ լուռ դիտում են իրենց առաջ բացված գիշերային գեղեցիկ տեսարանները...

Քաղաքային ժամացույցը խփում էր գիշերվա ժամի երկուքը:

Երջանիկ Թիֆլիսը կապտավուն խավարի մեջ նիրհում էր հանգիստ ու անխռով-ապահով...

Տրամվայները, կառքերը վաղուց դադարել էին աշխատելուց... Նույնիսկ ուշացած ճամփորդները չէին երեւում փողոցներում, համատարած լռություն ու անդորություն էր թագավորում քաղաքի վրա. երբեմն միայն Քուռ գետի խաղաղ կոհակների ավտրժավուր ճողվյունն էր լսվում ներքեից...

պետրոսը մեծ ջերմությամբ արտասանում է Մեծարեցի «Գիշերն անուշ է, գիշերն հեշտագին» բանաստեղծությունը:

Երբ վերջացնում է, համակված տխրությամբ ասում է. - Արտաշես, ի՞նչ լավ է խաղաղությունը... Ամենայն բարքը ու երջանկություն է բերում մարդկությանը...

Մեզ համար այդ խաղաղությունը շատ թանգ գնով ձեռք բերվեց, պատասխանում է արտաշեսը. - այնուհանդերձ ես վստահ եմ, որ հայ ժողովուրդը եթե մի քանի տասնյակ տարի խաղաղության մեջ ապրի, կստեղծի այնպիսի մի ծաղկած հայրենիք, որը ի վիճակի կլինի բոլոր հայերին էլ հայրենիք ընդունելու... Մնայն լինի խաղաղությունը...

Ընկերները նորից լռում են. ամեն մեկը տարվում է իր մտքերով... Գուցե անթույն են իրենց անհատական կյանքի մասին. չէտ որ երկուսն էլ երիտասարդ էին ու անուրի...

Քիչ անց Արտաշեսը խզելով լռությունը դիմում է Պետրոսին.

- Քիթորող, ամենաճիշտը կլինի՝ փաշային սնդավելուց հետո ամենեւին էլ չիեռանալով գազանի դիակից, չխուսափել իշխանություններից... Խոն մենք ավագաններ չեմք, բանդիտներ չեմք... Մենք

# ՄԱՐԴԿՈՒԹՅԱՆ ՀԱՅԻ ՀԱՅՐԵՆԻՔԸ. ԲԱՐՁԻԹՈՂԻ ՎԻՃԱԿ ԵՐԵՒՈՆԻ ԱՐԳԵԼՈՑՈՒՄ

միլիոնավոր անմեղ մորթուած կանանց ու երեխաների վրեժն ենք լուծում, մի ամբողջ ազգ սպանող մարկագանի ենք պատժում... Իտնչ ես ասում, այսպես ավելի արջանավոր չիտ լինի...

Պատասխանելու համար Պետրոսը երկար չի մտածում: Այդպիսի առաջարկությունը շատ նրա սրտով էր լինելու: Համապատասխանում էր նրա բուռն, կրքոտ ու արկածասեր խառնվածքին... Եւ միայն ավելացնում է, որ իշխանութուններին հայտարարենք, որ այդ տեղորը մորթուած միլիոնավոր թուրքահայության վրեժը լինելուց բացի, նաեւ հայ ժողովրդի բողոքն է հայակեր թուրք փաշաների հետ սերտորեն բարեկամանալու դեմ...

Այդպիսի որոշումից հետո, կարծես անցնում է նրանց հոգեկան ու ֆիզիկական հոգնությունն ու նրանք ուրախ տրամադրությամբ երգելով այն ժամանակները արգելված անմահ Լալբանդյանի «Մեր հայրենիքը», գնում են քնելու:

Հետեւյալ առավոտյան, երբ ընկերներին հայտնում են այդ որոշումը, նրանք ուղղակի ծառս են լինում դրա դեմ, մանավանդ տարեցները, այդ համարելով տաքցլխություն, երիտասարդական տհաս մտքի ցնորք, վտանգավոր ցուցամոլություն ու կորստաբեր անխիտություն...

Արտաշեսն ու Պետրոսը պնդում են իրենցը. -Թող դատ ու դատաստան լինի, մենք չենք խուսափի մեր դասակարգի, մեր պետության դատաստանից... Մենք հանցագործներ չենք, այլ հանցագործի պատժողներ...

- Ներկա թուրքամուլական քաղաքականության պայմաններում ի՞նչ դատ, ի՞նչ դատաստան, ի՞նչ արդարություն, ի՞նչ դասակարգային մոտեցում... Արտաշես-ս, լավ գիտցիր, որ Դոնբասի քո գիտցած բոլշեւիկ բանվորները չեն որ ձեզ մոտենան դասակարգային չափանիշով... Ձեզ այնպես «ասի ու խուկ» կանեն որիսկի ձեր իզն ու թող չերեւա...

Էլի երիտասարդները պնդում են իրենցը. տարեցները ստիպված են լինում հավաքել խորհուրդ: Բոլորը գնում են Թիֆլիսի Բուսաբանական այգին, այնտեղ մի հարմար, անվտանգ տեղ երկար վիճում ու վերջիվերջո համոզում Արտաշեսին ու Պետրոսին ետ կենալ իրենց անխիտեմ ծրագրից ու չվտանգել բոլոր մասնակիցներին... Այս շատ կարեւոր հանգամանքն էլ համոզում է երիտասարդներին հրաժարվել իշխանություններին կամավոր կերպով հանձնվելու մտքից:

Դրանից հետո մի լավ ուտում են, խմում Բուսաբանական այգու բուֆետում ու համերաշխ հեռանում:

Վերջին բաժակի վրա Արտաշեսը հայտարարում է, որ այլեւս ձգձգվելի ու սպասել շատ բարեհաջող իրադրության անկարելի է, ինչ էլ որ լինելու է թող լինի, առաջիկա երկու-երեք օրում պիտի վերջ տրվի փաշային...

Պետրոսը իր կողմից ավելացնում է, որ շատ ժգուշությունը վախենալու նշան է...

- Վախենալու բան չկա եւ այստեղ վախկոտներ չկան,- պատասխանում են ընկերները,- մենք միայն պիտի այնպես անենք, որ այս սուրը գործի մեջ տուժողը միմիայն թուրքը լինի... Այս է իմաստությունը, հնարքը...

- Այնքան զոհեր է տվել հայ ժողովուրդը, որ մեկը ավել մեկը պակաս նշանակություն չունի,- ասում է Պետրոսը:

- Հենց նրա համար, որ հայ ժողովուրդը այնքան զոհեր է տվել, ուրեմն էլ նոր զոհեր տալուց ամեն կերպ խուսափելու է: Մանավանդ ձեզ պես ասլան-բալասիներ... Մյուս առավոտվանից վերսկսվում է կանոնավոր հետախուզում-հետապնդում Ձեմալի հետեւից. ամեն ոք իր դիրքի վրա է, աշակուղջ ու զոհն:

Մինչեւ ամսի 21-ին ոչ մի առանձին բան չի պատահում, հարմար առիթ չի ներկայացնում, օրն անցնում է տաղտկալի եւ տխուր:

(Շար. 6)

Երեւանից քիչ հեռու, Ողջաբերդի սարավանդի լանջերին աճում են աշխարհին ու գիտությանը հայտնի վայրի ցորենի 4 տեսակներից 3-ը: Չորրորդ տեսակը տարածված է Սիրիայի եւ Պաղեստինի որոշ հատվածներում, եւ մինչ 30ևական թթ. Հայաստանում 3 տեսակների հայտնաբերումը ցորենի թիվ մեկ մշակաբույսի պատմական ծննդավայրը համարվում էին այդ երկրները: Դա իսկական սենսացիա էր գիտության համար: Համամիութենական գյուղատնտեսական ակադեմիայի պրեզիդենտ Վավիլովը եկավ Հայաստան իր աչքով տեսնելու եւ ուսումնասիրելու Էրեբունի արգելոցում հայտնաբերված վայրի ցորենները: Վավիլովն անմիջապես առաջարկեց այդ տարածքում արգելոց ստեղծել, բայց միայն 50 տարի անց, 1981 թ., հայ գիտնականների համառ ջանքերի շնորհիվ հաջողվեց Էրեբունի արգելոց հայտարարել: Այսինքն, այստեղ մարդու միջամտությունը սահմանափակվելու էր միայն գիտական հետազոտություններով, առանց խաթարելու կենսամիջավայրի եւ հազվագյուտ բուսատեսակների բնական աճն ու զարգացումը:

Վերջին տասնամյակի սոցիալքաղաքական հեղաբեկումների հետեւանքով շատ խնդիրների հետ Էրեբունի արգելոցի պահպանությունն էլ հայտնվեց պետական ու հասարակական ուշադրությունից դուրս: Համամարդկային բնապահպանական ժառանգության այս հազվագյուտ օջախը տարածվում է Երեւանից Գառնի տանող ճանապարհին, 89 հակի վրա: Այսօր այն չորս կողմից աննպաստ շրջափակման մեջ է. հարավային սահմանի վրա այգեգործական հողամասեր են, մյուս կողմերի հարեւանները ամառանոցային առանձնատներ ու տարբեր գյուղեր են: Արգելոցն ամենեւին էլ անձեռնմխելի չէ շրջակաքի բնակչության համար: Գյուղացիների աչքը մշտապես այս տարածքի վրա է. ստեպլանցի անասուններ են արածեցնում այստեղ, հաջողեցնում են հնձել խտրը: Գյուղացիները սառը տարակուսանքով են վերաբերվում տարածքը չօգտագործելու արգելքների հազվադեպ ու թույլ արտահայտություններին: Բանը հասել է այնտեղ, որ նրանք ժամանակ առ ժամանակ նույնիսկ բողոքի ակիբ են բարձրացնում պահանջելով թույլատրել իրենց օգտագործելու տարածքը: Մի պահ համառորեն պնդում էին նույնիսկ այստեղ կեռասի այգիներ գցել: Սակայն գիտնականների ու նվիրյալ բնապահպանների միջամտության շնորհիվ հաջողվեց հանդարտեցնել կրքերը:

Միայն գյուղացիների վտանգավոր նկրտումները չէ, որ սպառնում են արգելոցին: Ժամանակին, անբարեհաճ հայացքներից պաշտպանելու համար, այն ցանկապատել էին: Դժվար տարիներին ցանկապատը հատված առ հատված թալանվեց ու ամհետացավ: Ամռան շոգերին այստեղ մշտապես հրդեհի բռնկման վտանգ կա: Երեխաներն են կրակի հետ խաղում, երբեմններբեմն խորվածի սիրահարները հենց այստեղ հանգստանալու վտանգավոր ընտրություն են կատարում: Առաջներում արգելոցի պահակներին մշտապես ձի էր տրամադրվում, որպեսզի հնարավորություն ունենան միշտ ստուգելու, թե ինչ է կատարվում պահպանվող տարածքի տարբեր հատվածներում: Հիմա եթե ցորենի հասունացման ժամանակ հրդեհ էլ բռնկի, իսկ դա ամեն պահ հնարավոր է, հազիվ թե կարողանան ժամանակին մարել: Ինքնախաբերության կամ զուցե բողոքի ձայները լռեցնելու համար տրակտորով թեթեւակի վարել են արգելոցի եզրային հատվածները, բայց դա, իհարկե, ոչ խնդրի լուծում, ոչ էլ փրկություն է:

«Վայրի ցորենների ոչնչացման հնարավոր աղետը անհամեմատելի է նույնիսկ զեղարվեստի ամենամեծարժեք կտավի կորստի հետ», ասում է կենսաբանական գիտությունների դոկտոր, գյուղատնտեսական ակադեմիայի թղթակիցական Վոլոդյա Ոսկանյանը, ով ժամանակին երկար տարիներ աշխատել է Էրեբունի արգելոցում: Այստեղ այսօր որեւէ գիտական աշխատանք ու ուսումնասիրություն եւս չի կատարվում: Հացահատիկի գեներֆոնդը կորցնելու

միանգամայն իրական վտանգ է առկա: Կարելուր չէ, որ այսօր այն չի օգտագործվում գենետիկայի կամ սելեկցիայի բնագավառում: Տորենի վայրի նախահայրերի աչքի լույսի պես պահպանությունը բնապահպանական անփոխարինելի արժեք ունի ընդհանրապես ողջ մարդկության համար: Խնդիրն այն է, որ հացահատիկի բերքատվության բարձրացման ագրոտեխնիկական եւ այլ տիպի հնարավորություններն անսպառ չեն: Որոշակի սահմանի հասնելուց հետո, ոչ պարարտանյութերի, ոչ քիմիկատների օգտագործումը չի օգնում: Հենց այդ պահին է, որ վայրի ցեղակիցները փրկարար առաքելություն պիտի իրականացնեն, հենց դա է ցորենի վայրի տեսակների գեները ներարկելու ժամանակը: Այդ վայրի տեսակներն օգտագործելով էր, որ ոչ հեռավոր անցյալում պրոֆ. Պապին Ղանդիլյանը ստեղծեց «Էրեբունի» մշակովի տեսակը, հետո նաեւ այլ տարատեսակներ:

Եթե մարդկային որել ներկայություն էլ նախատեսվում է արգելոցում, ապա միայն գիտնականներն են լինելու: Այստեղ այսօր ոչ ոք գիտությամբ չի զբաղվում: Ոչ ոքի հայտնի չէ, թե արգելոցային ռեժիմի պայմաններն ինչպես են ազդում վայրի ցորենների աճի վրա՝ խթանում են դրանց զարգացումը, թե՞ հակառակը: Ոչ մի տվյալ չկա, գիտնականի ոտք չի մտնում այստեղ: Աշխարհահռչակ նշանակության Էրեբունից աչքից ու սրտից հեռու է, այստեղ նույնիսկ զրասենյակ էլ չկա, կիսաքանդ մի կառույց է դրա փոխարեն:

Էրեբունի արգելոցում հաշվվում են նաեւ մոտ 300 տեսակ բարձրակարգ ծաղկավոր բույսեր, որոնցից 20-ը ներառված են Կարմիր գրքի մեջ, ինչպես թրաշուշանը, հիրիկի մի քանի տեսակները, խոշորածառերը: Այստեղ են ցորենի մոտիկ ցեղակիցները՝ այծակը, գարին, տարեկանը: Եվ վերջապես այստեղ է աճում «գազ» կոչվող թփատեսակը, որ ժամանակին լայնորեն կիրառվում էր ոչ միայն թղթի, այլև ռազմական արդյունաբերության մեջ: Այն խեղձ է արտադրում, որը թռչվելիս 50 անգամ մեծացնում է ծավալը: Հայրենական պատերազմի ժամանակ Ա. Միկոյանի ցուցումով նույնիսկ քարտեզագրվել էին «գազի» զբաղեցրած տարածքները, պարզաբանվել կիրառման հնարավորությունները: Այսօր էլ «գազը» օգտագործվում է, բայց միայն գյուղացիների կողմից, իբրև վառելանյութ:

ԿԱՐԻՆԵ ՂԱՆԻԷԼՅԱՆ  
(ԱԶԳ)

## Աշխարհում ինչի՞ համար են սիրում հայերին

Ս. ԻՍԿԱՆՂԱՐՅԱՆ, Գ. ՎԱՅՆՅԱՆ

81. Արարատը մշտապես առկա է հայոց լեզվում, հայի հիշողության մեջ, հայ քերթության մեջ, հայ կյանքում: Բայց ու այսօրվա հայկական պետության մեջ չէ. գտնվում է գերության մեջ: Իր ոտքերին մնացել է նրա գերության մեջ:

Որպեսզի մենք եւս հասկանանք, թե ինչ է նշանակում հայի համար Արարատի ամենօրյա վերջը, վերցնելը մի օրինակ. պատկերացնենք, որ մեր սահմանները զժուռ ենք Ակրոպոլիսի փեշերին, նրա շուրջը, այնպես, որ ամբողջ Աթենքը դառնա մի ամֆիթատրոն՝ շրջված դեպի Պարթենոնը, բայց տաճարը, արձանները եւ մնացած բոլորը, ինչպես առում էր Մակրիյանսիսը, լինի թուրքերի ձեռքում, դրանից այն կողմ ամեն ինչը թուրքական լինի, իսկ մենք լինենք ամֆիթատրոնում եւ դիտենք տեսարանը... Սոտավորապես փիճակն այստեղ այդպիսին է: Հայը, բացելով իր դուռը, դիմացը տեսնում է Արարատը: Տեսնում է եւ իսկույն մի նզովք է շարտում այնտեղ, որտեղ պետք է շարտել. նզովք նրանց, ովքեր գերության մեջ են պահում այն. նրանց, ովքեր նպաստեցին դրան. նրանց, ովքեր անտարբեր եւ անհոգ գտնվեցին. մի խոսքով՝ շատ-շատերին: Պատմությունը երկար է: Այսպես է նա սկսում իր օրը՝ նզովելով պատասխանատուներին եւ ողջունելով լեռը: Այս գայթակղությունը մեծ է: Որովհետեւ

տեսարանը եւս եզակի է: Ընդհանրապես, բոլորս մեր լեռների մասին առում ենք՝ "ամենագեղեցիկը աշխարհում": Սակայն այստեղ այցելող օտարագիրն եւս պարտավորվում է խոստովանել, Արարատը իրոք աշխարհի ամենագեղեցիկ լեռն է:

82. Խաչքարը պարզապես քարե խաչ չէ: Այն հայերի գեղարվեստական խորհրդանիշն է, դրա վրա դրոշմված է զարդարվեստի նրա ճաշակը, գեղեցիկի նուրբ զգացողությունը եւ ինչ-որ չափով նաեւ այդ մի ժողովրդի պատմությունը: Վերցնում են խոշոր մի քարեբեկոր եւ այն դարձնում ասեղնագործ գորգ, պարտեզ, երգ...

Հատկապես հիանում են, թե հայերը ինչպես են ապահովում ոճը, անհրաժեշտ համամասնությունները, առանց կրկնելու մանրամասները: Այս հարցում նրանք առանձնապես հնարամիտ են: Նրանք հետեւողականորեն բազմածելություն են հաղորդում հավասարակշռությանը: Իրար դիմաց երկու փոքրիկ լուսամուտներ, աղեղով իրար միացած սյուներ, կտուցներով իրար դարձած երկու թռչնակ, միեւնույն բույսի երկու տերեւ, նույն ծաղկի երկու թերթիկ պատկերելիս վարպետը կարողանում է այնպիսի մի մանրուք գտնել, որ տարբերի դրանք. մեկն այսպես է, մյուսն՝ այնպես, թեւեւ դրանք երկվորյակներ են: Շուրջը դիտելը վարպետին համոզել է, որ կյանքում ոչինչ բացարձակապես նման չէ մեկ ուրիշ բանի, իրար նման չեն նույնիսկ մեր զույգ աչքերը. եւ իր այս դիտումը վարպետը այսպիսի հազվագյուտ հնարամտությամբ կիրառում է իր գործի մեջ, որ հաճախ մեզ առաջարկում է հրապուրիչ եւ գեղաշնորհ խաղեր...

Այս արվեստի տարիքն ինչքա՞ն կլինի: Ասում են, թե 10-րդ կամ 9-րդ դարի հին չէ: Այդ ժամանակ արաբներն ու նրանց զարդարվեստը վաղուց էին հասել այստեղ: Այսուհանդերձ, խաչքարը զուտ հայկական արվեստ է: Ոչ մի առջնություն չունի արաբական զարդարվեստի հետ ոչ իր կատարման եղանակով, ոչ էլ, առավել եւս, իր գաղափարով եւ պատկերներով:

... Այս կանգնեցված նրբակերտ սալի վրա դրոշված է հայի բնավորությունը, նկարագիրը, նրա աշխատասիրությունը, հնարամտությունը եւ արթունությունը, ամենամուրթ եւ բարդ չափերի մեջ չնվորվելու, ճակատագրի դժվար շրջադարձերին չկորցնելու նրա կարողությունը: Իր սեփական խելքի հենքը: Իսկույն նկատելի է նրա համառ կռիվը այն կարծր նյութի հետ, որի վրա նրան փիճակել են ապրել, իր հաղթանակը նրա նկատմամբ: Այդ սալը հայի աշխարհագրությունն է, նրա պատմությունը, մարդկային տեղանքը՝ աշխարհագրականի վրա, նրա առանձնահատուկ քայլվածքը՝ քարաշատ հողերի եւ պատմության դաժան ուղիղների վրա: Այսպիսի կարելու բաներ են պատմում Հայաստանի այս տեղեկատու քարե մատյանները նրա արեւի, անձրեւների եւ արտասովոր լուսավոր երկնքի մասին:

83. Դեռ պետք է ուշադրություն դարձնել իր փոքրիկ տարածությունը բազմաթիվ ու բանագան բաներով լցնելու՝ հայի ծարավին: Ծարավ է անհաղթահարելի անհրաժեշտություն: Դա հատուկ է նաեւ նրա երկրին:

Ցանում է վերակենդանացնել մի մեծ պատմություն, սեղմված իր այս փոքրիկ երկրում, որը չի կարող միայն դեպի ետ մայել. այն ամբողջապես ներկայի որոնումների մեջ է, տքնում է ու վազում, ինչպես ամեն մի մի ժողովուրդ, բայց եւ կրում է իր ուսերին հին բեռը, որը չի կարող վստահել մեկ ուրիշին: Հայերի անցյալը հունական պատմությունն է: Հայերը բախտ չունեցան, որ իրենց անցյալը համատեղ բարձրացնեք քառաքակիրթ մարդկությունը: Հայը գիտի, որ այս գեղեցիկ խաչքարը, 7-րդ դարի այս զարմանահարաշ մատուռը պիտի պահպանի ոչ այլ ոք, քան ինքը: Մյուսները շատ-շատ պիտի անցնեն այստեղից ու տեսնեն: Հայը իր անցյալը նույնիսկ մեկ թույլ մոռանալու հնարավորություն չունի:

Ու տեսնում ենք, որ հիսաքսանջ մի ձեւով կյանքի հոսանքներն անցնում են այս երկրով եւ արթնացնում էին կերպարանքներ եւ կարոտներ: Իրոք հիսաքսանջ են այսօրվա հայերը՝ նկարիչը, քանդակագործը, բանաստեղծը, շինարարը, արձակագիրը, այսօրվա հայը, որ ստեղծագործաբար մասնակցում է իր ազգային պատմության կերտմանը, հիսաքսանջ են նրանց իրենց ստեղծած հնարավորություններով, որպեսզի չկորցնեն անցյալը եւ բաց չթողնեն ներկան: Որպեսզի ետ չմնան

աշխարհից, բայց եւ չկտրվեն այն արժեքներից, որոնք ինչ-որ մեկը պատք է կրի:

84. Հայերը հարուստ եւ լավ հումոր ունեն: Դա նրանց ամենակարեւոր արժանիքներից է... Երբ ճաշի են նստում իրենց բարեկամների հետ, սեղանը տեսնում են այնպես, ինչպես հմուտ վարպետը տեսնում է քարե սալը, որը պետք է ասեղնագործի: Նրանք չեն հոգնում եւ շատ հնարամիտ են: Նաեւ շատ հաճելի, որովհետեւ չեն համառում, բեռ չեն դառնում, ինչպես ուրիշները:

85. Հայերի բնության եւ պատմության մեջ կան աղբյուրներ, որոնք անընդհատ ներշնչում են հավատարմություն հիշողությանը, հնագույն արարումներին: Դա նրանց հոգեկան կլիմայի վրա իշխող զգացմունքն է, որը առատորեն գունավորել է նրանց պատմությունը, նրանց արվեստը, նրանց հոգեւոր մշակույթը, նույնիսկ հին ու ժամանակակից հայ հայրենասերների գործնական վերաբերմունքը: Հայարտ ու կենսունակ զգացմունք: Շատ դեպքերում նաեւ տխուր: Այսինքն այդ զգացմունքն իր հայարտությամբ քաղցր է, բայց գլխավորապես տխուր, ինչպես այն երգը, որը երբեք թույլ չտվին լրիվ երգել, եւ այն վերադառնում է երգչի հոգում, դառնում հառաչանք, թաքնված զանգատ: Հայը, որ գիտի եւ սիրում է իր պատմությունը, ուր էլ որ ապրելիս լինի, մտածում է այդ չասված երգերի մասին:

## Վարդան Այգեկցի

### 11. Իշխանը եւ այրի կինը

Մի իշխան կար խիստ չար եւ անիրավ: Եւ նույն քաղաքում ապրում էր մի այրի կին. եւ իշխանը, հարկ պահանջելով, նեղում էր նրան, եւ այրի կինն աղոթում էր, որ իշխանն ունենա խաղաղ ու երկար կյանք:

Գնացին, ասացին իշխանին թո չարության համար աղոթում է այրին: Եւ իշխանը եկավ եւ ասաց.

-Ես քեզ բարիք չեմ արել, ո՛վ կին, դու ինձ համար ինչո՞ւ ես աղոթում:

Այրի կինն ասաց.

-Քո հայրը վատ մարդ էր, ես անիծեցի, եւ նա մեռավ: Դու նստեցիր նրա տեղը ավելի խիստ չար: Եւ այժմ վախենում եմ, որ մեռնես, եւ թո որդին քեզնից ավելի չար լինի:

### 12. Իմաստուն զինվորը

Մի իմաստուն զինվոր պատերազմ էր գնում եւ նա երկու ոտքով կաղ էր: Եւ զինվորներից մեկը նրան ասաց.

-Ո՞վ ողորմելի, ո՞ր ես գնում: Քեզ իսկույն կսպանեն, որովհետեւ փախչել չես կարող:

Եւ նա ասաց.

-Ո՞վ անմիտ ես չեմ գնում պատերազմ՝ փախչելու, այլ կանգնելու, եւ կռվելու եւ հաղթելու:

### 13. Թագավորը եւ օձը

Կար մի թագավոր եւ ուներ նա մի սիրելի օձ, որ նրան ամեն օր բերում էր մի կարմիր դահեկան: Եւ թագավորն ունեցավ մի մանուկ, որին սնուցում էր գահի վրա եւ օձը նետում էր մանկան պարանոցով, եւ այդպես խաղում էին օձն ու մանուկը: Եւ երբ մանուկը մեծացավ, մի անգամ խաղի ժամանակ սուրը հանեց եւ կտրեց օձի պոչը եւ գետին գցեց: Եւ զայրացավ օձը, թույնով զարկեց մանուկին, եւ մանուկը իսկույն մեռավ, եւ օձը գնաց օտար երկիր:

Եւ երբ թագավորը եկավ եւ մանուկին օձի թույնից սեւացած եւ մեռած տեսավ եւ օձի պոչը գետնին ընկած, իմացավ, որ իւր մանուկն է թրով կտրել օձի պոչը: Եւ սգաց որդուն. տարավ թաղեց գերեզմանոցում:

Եւ անցավ մի ժամանակ, եւ թագավորը խնդրանքներ ուղարկեց այն օձի մոտ եւ ասաց.

-Գիտեմ, որ առաջ իմ որդին է ծռություն արել. նա կտրել է քո պոչը, ապա դու կծել ես նրան: Ինչ որ եղավ՝ եղավ, եւ

իզուր գնացիր: Արի, եւ մենք կը լինենք առաջվա նման իրար սիրելի եւ միասին կապրենք:

Իսկ օձը պատասխան տվեց եւ ասաց.

-Այդպես չէ. որ ես պիտի նայեմ իմ պոչի վրա, իսկ դու թո որդու գերեզմանին, ուրեմն մեր միջից թշնամությունը չի վերանա: Լավն այն է, որ դու եւ ես իրարից հեռանանք, որպեսզի ուրիշ մեծագույն չարիք չծնվի մեր մեջ:

### 14. Էշին թոռ ծնվեց

Էշին ավետիս տվին, թե.

-Յնժա եւ ուրախ եղիր եւ մեծ ընժա պարգևիր, որովհետեւ քեզ թոռ ծնվեց:

Եւ էշն ասաց.

-Վա՛յ ինձ, բարեկամներ, եթե հարյուր թոռ էլ ծնվի, չեն թեթևացնի ծանրությունն իմ մեջքի բեռան:

### 15. Առյուծը, աղվեսը եւ արջը

Առյուծը հիվանդացավ եւ բուրդ կենդանիները եկան նրան տեսության, միայն աղվեսը ուշացավ: Արջը չարախոսեց նրան, եւ աղվեսը դռնամտից լսեց եւ, ներս ընկնելով, թավալվեց առյուծի առաջ:

Առյուծը ասաց աղվեսին.

-Բարի ժամի չեկար, գարշելի, ասա ինձ, ինչո՞ւ ուշացար:

Աղվեսն ասաց.

Մի բարկանար, բարի թագավոր, երդվում եմ քո գլխով, որ քո առողջության համար այցելեցի շատ բժշկապետների եւ մեծ չարչարանք քաշեցի, բայց ինճա դեղը քո բժշկության:

Եւ առյուծն ասաց.

-Բարի եկար, իմաստուն կենդանի, ի՞նչն է այդ դեղը:

Աղվեսն ասաց.

-Խիստ պիտանի է եւ դյուրին. բժշկապետներն ասացին, թե կենդանի հանեք արջի մորթին եւ տաք-տաք գցեք առյուծի վրա, իսկույն մորթեցին ցավի կը հանի հիվանդից:

Առյուծը հրամայեց, արջին բռնեցին եւ սկսեցին հանել մորթին: Իսկ նա վայում էր եւ արծակում մեծամեծ ոռնոց:

Եւ աղվեսը ասաց.

-Այդ ամենը քեզ եւ նրան, ով արքունիք մտնելով, կը չարախոսի մեկին:

## ՎԱՅԿԱԿԱՆ ԱՌԱՅՆԵՐ

-Եզն ընկավ, դանակավորը շատացավ:

-Եթե տասը բան գիտես, մեկն ասիր, ինճը պահիր:

-Եղիր գիտունին գերի, մի լինիր անգեւտին սիրելի:

-Ես աղա, դու աղա, բա մեր աղունն ո՞վ աղա:

-Ես գանձ եմ ասում նա տանձ է հասկանում:

-Ես քեզ բան եմ ասում, իսկ դու բամբակ ես զգում:

-Երբ համոզված չես որ խոսքդ բանի տեղ կանցնի, լավ է չխոսես:

-Երգ շատ գիտեմ, բայց ձայն չունեմ, որ խոսեմ:

-Երեխային գործի դիր, ետեւից գնա:

-Երեխան իր մատը ծծում, կարծում է մոր կուրծքն է ծծում:

## ՊԱՐՍԿԱԿԱՆ ԱՌԱՅՆԵՐ

-Հարցնում ես՝ արջը ձո՞ւ է ածում, թե՞ ձագ է բերում.- պատասխանում է՝ այդ պոչատից ամեն բան կարելի է սպասել:

-Հացը թխում են քանի թոնիրը տաք է:

-Հնձում է առանց ցանելու:

-Հողագործն անձրեւ է ուզում, լվացարարուհին՝ արեւ:

-Հոնքը շինելու փոխարեն, աչքն էլ հանեց:

-Հոր փորոզն ինքը մեջը կընկնի:

-Հորթը ծերացավ, բայց եզ չդարձավ:

-Հույսը հուսահատության մեջ է ծնվում:

-Չեռնափայտը դրախտից է եկել:

-Չրի քացախը վճարովի մերից քաղցր է:

## Արփի Յուրիի Վանյան

## ԹԵԿՈՒԶ...

Անցյալ ամիս Լույսի 81-82 միացյալ համարների հրատարակումից հետո Արցախի Հանրապետության շրջանից ստացանք «Դիզակ» թերթի աշխատակից խմբագրի տեղակալ, գրող-արձակագիր Արփի Վանյանի ստեղծագործություններից մեկը: Այս համարում առիթ ունենք նրան եւ իր գրվածքը ծանոթացնելու Լույսի հարգելի ընթերցողներին: Գրվախօսի առաջին մասը ներառում ենք սույն իսկ երկրորդ մասը «Լույսի» մյուս համարում: Այժմ, նախ ծանոթանանք նրան ապա Հանրապետության «Դիզակ» թերթին հեղինակի իսկ տողերով:



Ամենայն բարիք եւ հաջողություն ենք մաղթում սիրելի Արփիին եւ Արցախի քաջարի մեր հայրենակիցներին.

*«Լույս»-ի խմբագրություն*

\*\*\*

Ծնվել եմ 1977 թվականի մայիսի 30-ին ԼՂՀ Հանրապետության շրջանի Կարմրակուն գյուղում:

Սովորել եմ ավարտել եմ Հանրապետության Միջալեյ Մանվելյանի անվան միջնակարգ դպրոցը: Ուսման տարիները համընկել են Արցախյան ազատագրական շարժման, այնուհետեւ նաեւ պատերազմական գործողությունների հետ:

Ողջ պատերազմի ընթացքում ես ու իմ ընտանիքը չենք լքել մեր հայրենիքը, արկերից ու ականներից պաշտպանվում էինք ռմբապատարաններում: Պատերազմական դաշտում էր հայրս, եղբայրներս:

Երկու անգամ ռմբակոծությունից հիմնահատակ փլվել է իմ հայրական օջախը /Հանրապետում/, երկու անգամն էլ, սակայն, վերականգնել ենք:

Ավարտել եմ Երեւանի Մենջեշենի համալսարանի միջազգային ժուռնալիստիկայի ֆակուլտետը:

Աշխատում եմ Հանրապետության «ԴԻԶԱԿ» թերթի խմբագրությունում որպես խմբագրի տեղակալ: Արցախի գրողների միության անդամ եմ: Գրող-արձակագիր: Ունեմ մի շարք տպագրված ու անտիպ ստեղծագործություններ: Շուտով լույս կտեսնի իմ «Պատմվածքների ժողովածուն»:

### «ԴԻԶԱԿ» շրջանային թերթը

«ԴԻԶԱԿ» շրջանային թերթը լույս է տեսնում 1938 թվականից: Տարբեր ժամանակաշրջաններում կրել է տարբեր անուններ, այժմ կրում է իր երկրամասի պատմական անունը՝ Դիզակ:

Արցախյան գոյամարտի տարիներին հասկանալի պատճառներով դադարել էր իր գործունեությունը, սակայն զինադադարից անմիջապես հետո կրկին վերսկսել այն:

Խմբագիրը վաստակավոր լրագրող Յուրի Մադունցն է:

Վերջերս միացել ենք համացանցին, մեր էլեկտրոնային փոստի հասցեն է՝ Dizak7@ktsurf.net

Ունենք մի շարք դժվար հաղթահարելի խնդիրներ, որոնք խանգարում են թերթի նորմալ գործունեությանը, բայց մենք արցախական ոգով դրանք հաղթահարում ենք.

Քանզի ունենք միայն մեկ նպատակ՝ անձնուրաց ծառայել մեր հայրենիքին ու միշտ լինել մեր ընթերցողների կողքին:

Շնորհակալություն:

- Դուք պատվով կատարեցիք հայրենիքի հանդեպ ձեր սրբազան պարտքը մեր փառապանծ զինված ուժերի շարքերում: Հիմա զորացրվում եք, վերադառնում եք տուն: Հույս ունեմ, որ բարձր կպահեք հերոսական հորիորդային բանակի ավանդույթները, ամենուր կլինեք անձնական օրինակ, կդառնաք արժանավոր մարդիկ,- իր խոսքն ավարտեց զորամասի հրամանատարը:

Հետո, երբ հնչեց «ազա~տ» հրամանը, Արամն ու Մուսան, որ շարքում կանգնած էին կողք-կողքի, շարժվեցին դեպի փառքի ծառուղի ու նստեցին նստարաններին:

-Դե, տանկիստ, շնորհավոր,- Արամը խփեց ընկերոջ ուսին:

-Մի շաբաթից հետո կլինենք Բաքվում: Պատկերացնում ես, վերջին օրերս անհամբեր եմ դարձել:

- Ես էլ, Մուսա, սիրտս կրծքավանդակիցս դուրս թռնել է ուզում, երբ հիշում եմ մեր հանդն ու չուր, մորս ...

- Արամ, մեր պայմանը ուժի մեջ է, չէ՞. դու սկզբում կիյունկալվես մեզ մոտ, կծանոթանաս մերոնց հետ, մայրս ուզում է իր երախտագիտությունը հայտնել քեզ, մի լավ քեֆ կանենք, հետո քեզ կճանապարհեն ձեր տուն:

- Թող, Մուսա, ի՞նչ երախտագիտության մասին է խոսքը... դու դեռ չե՞ս սոռակել այն տհաճ դեպքը: Եվ հետո... Ի՞նչ է, դու այդպե՞ս չէիր վարվի, եթե փոխվեին մեր տեղերը:

- Իհարկե, բայց համենայնդեպս...

- Առանց համենայնդեպսի:

Մուսան երազկոտ աչքերը երազկոտ աչքերով նայեց երկնքին, ժպտաց ու շարունակեց փոխված տոնով.

- Շուտով կտեսնեմ Լեյլայիս:

- Ես քեզ նախանձում եմ... Այդպես մի՛ նայիր. սպիտակ նախանձով եմ նախանձում... քեզ սպասում է քո սիրած աղջիկը, կա՞ դրանից ավելի զեղեցիկ բան:

- Լեյլան շատ հայ ընկերուհիներ ունի, նրա եղբոր կինը նույնպես հայուհի է: Կծանոթացնենք որևէ մեկի հետ, կամուսնանաս, կապրենք նույն քաղաքում:

- Չէ, Մուսա, ես շատ եմ սիրում իմ փոքրիկ ծննդավայրը, չեմ կարող...

... ճանապարհը երկար էր ու անցնում էր տասնյակ ռուսական քաղաքների, գյուղերի, դաշտերի միջով: Ճանապարհը տղաներին տանում էր մի երկիր, որտեղ նրանց վիճակվելու էր անցնել բազում փորձությունների միջով, որտեղ նրանք պետք է բազում անգամ մերժեին եւ նույնքան անգամ էլ արդարացնեին իրադարձությունների յուրօրինակ ընթացքը, պայքարեին արտաքին ու նաեւ ներքին՝ հոգեկան հանգամանքների դեմ եւ ձգտեին մնալ մաքուր, չպղծված խղճով:

\* \* \*

Երեկո էր: Ծովից փչող քամին մաքրությանը ու թարմությանը էր լցնում սենյակը, որտեղ հավաքվել էին Մուսայի ընկերներն ու հարազատները: Բոլորը ուրախ էին: Աշխույժ մթնոլորտ էր տիրում : Մուսան



օրվա հերոսն էր. Գստել էր տոնական սեղանի շուրջ ու անընդհատ ժպտում էր. մեկ Լեյլային, մեկ Արամին, մեկ մյուսներին: Լեյլան անոթխած հայացքը չէր կարողանում կտրել նրանից. «Երեւի շտապում են մենակ մնալ» մտածեց Արամը եւ քթի տակ ժպտաց.

-Արամ, Մուսայիս հայ ընկեր,- հանդիսավոր կերպով նրան դիմեց տանտերը,- խոսքը քոնն է:

Արամին թվաց, թե «հայ» բառը շեշտակի ու առանձնահատուկ հնչեց այդ գառամյալ մարդու շուրթերից: Սակայն դա մի պահ էր, հաջորդ վայրկյանին հավաքեց մտքերը , ելավ տեղից ու բարձրացրեց բաժակը .

-Ես խմում եմ ընկերության կենացը: Մուսան իմ ամենամոտիկ ընկերն էր այս երկու տարիների ընթացքում:

-Եվ զու՞ցե մենք չհանդիպեինք, ավելի ճիշտ, չճանաչեինք իրար, եթե չլիներ մի դեպք,-նրա խոսքը շարունակեց Մուսան:

-Ես քեզ արգելում եմ պատմել այդ մասին:- Արամը ժպտալով հանդիմանեց:

-Ինչու՞, Արամ, թող պատմի,- խոսեցին սեղանի շուրջ Գստածները:

- Արամն ինձ փրկել է մահից: Մենք դեռ նոր էինք գորակոչվել: Ես մեկի հետ խոսքուզրույցի բռնվեցի ցերեկով: Երեկոյան զորանոցում մի կողմ քաշված նամակ էի գրում, չնկատեցի , որ նա ձեռքին երկաթի հաստ կտոր բռնած կանգնել է գլխավերես եւ ուր որ է կխփեր, եթե այդ պահին չհայտնվեր Արամը... իսկ մնացածը թող ինքը պատմի:

- Ես Մուսային զորավարությունների ժամանակ մի երկու անգամ տեսել եմ մաշկի ու մազերի գույնից կռահել էի , որ մեր կողմերից է: Այդ երեկոյան որոշել էի մոտենալ ու ծանոթանալ հետը: Մտա սենյակ, տեսնեմ մեկը ուզում է խփել նրան: Ես, իհարկե, դեմն առա ...

- Դե, դե, մի համեստանա, պատմիր, թե ինչպե՞ս դա եղավ, ի՞նչ հմտություն ցուցաբերեցիր, ի՞նչ մեծ ծեծկռտուք ստացվեց, ինչ հաջորդեց դրան...

- Մի խոսքով՝ այդպես տեղի ունեցավ մեր ծանոթությունը:

- Այդ օրվանից մենք միշտ միասին էինք եւ այլևս ոչ ոք չէր փորձում վիրավորել մեզ, եւ...

Երաժշտության ծանոթ ելեւեղները կիսատ թողեցին խոսքը: Տղաները նայեցին իրար, ժպտացին ու երկուսն էլ մի մարդու պես ելան պարի: Գիշերն անցավ քեֆ ու խրախճանքի մեջ:

Հաջորդ օրը առավոտյան երեքով ծովափին էին: Մուսան ոգեւորված էր.

-Լեյլան շուտով կավարտի բժշկական տեխնիկումը, մենք կամուսնանաք, եւ կունենանք ջուխտ տղաներ:

Լեյլան շիկնեց ու մի չարաճիճի -հանդիմանական հայացք ձգելով սիրած տղային , դիմեց Արամին.

-Արամ, իսկ դու սիրած աղջիկ ունե՞ս:

-Չէ, չեմ հասցրել, -պատասխանեց Արամը:

-Իսկ ես այնքա՞ն շատ հայ ընկերուհիներ ունեմ այստեղ...

-Գիտեմ, Մուսան պատմել է , իմ հայրենիքում էլ լավ աղջիկներ շատ կան:

-Արամ, մեր հարսանիքին պետք է անպայման ընկերուհուդ հետ գաս,- ասաց Մուսան:

-Իսկ եթե դեռ չունենամ ինձ մենակ չե՞ք թողնի...

Ու երեքով բարձր ծիծաղեցին, ծիծաղեցին այն պարզ ու մաքուր ծիծաղով, որն երբեք չի մոռացվում, որն էլ ավելի է հարազատ դարձնում մարդկանց, կապում իրար հոգեկան ամուր կապերով: Եվ նրանցից ոչ ոք չէր կարող այդ պահին անգամ կռահել, որ շուտով, շա՛տ շուտով ամեն ինչ տակն ու վրա կլինի եւ այս հանդիպումը, զու՞ցե վերջին բարեկամական հանդիպումն է երկու ընկերների միջեւ...

... Դանդաղ անցավ աշունը, եկավ նոր տարվա ձմեռը, եկավ փետրվարը... Եւ ավելի ծվեց Արցախ աշխարհը: Անարդարությունը կլանեց արդարությանը, չարը բարուն, վատը լավին, կեղծիքը ճշմարտությանը: Փոխվեց ամեն ինչ, բարեկամները թշնամացան, հարեւանները դարձան փոխյաններ, արյան ու վրեժի հոտը փչեց շուրջ բոլոր...

Ազերիները չցանկացան ձեռքից տալ ոսկե երկիրը՝ Ղարաբաղ անունով, ազերիները կատաղել էին ... Եվ կազմակերպեցին Սոււմայիթ... Բաքու... տասնյակ գյուղերի բռնագաղթ ու կոտորածներ:

Աշխարհը ցնցվել էր մահան ոճրագործությունից: Այդ խառն օրերին էր, որ Արամը նամակ ստացավ.

«... Այս ամենից վատ հոտ է փչում. դա ես զգացի լսելով մեր խելոքներից մեկի ելույթը հեռուստացույցով: Շատ ափսոսում եմ: Բայց իմացիր, որ ինչ էլ լինի, ես նույնն եմ եւ կուզենայի, որ դու էլ մնայիր նույն Արամը... Վերջին հաշվով ամեն ազգ իրավունք ունի ապրելու այնպես , ինչպես ինքն է կամենում, եւ հողն էլ նրանն է, ով ապրում է նրա վրա: Ծանոթներիցս շատերն են կիսում իմ կարծիքը:

Այդքանը՝ հեչ. Երեկ ես ու Լեյլան քեզ հիշեցինք : Նա ասում է, տեսնես Արամը մեր մասին ի՞նչ է մտածում եւ կարո՞ղ է, արդյոք զալ ժամանակ, որ նա մեզ իրեն խորթ կամ թշնամի համարի:

Ինչեւէ, ամեն ինչ թողնենք ժամանակի ընթացքին:

Միշտ քո ընկեր՝ Մուսա>:

Կարդաց, մի կողմ դրեց նամակը, վառեց ծխախոտը , խոր շունչ քաշեց: Գլխում մոծավանջ էր. տարբեր զգացմունքների, ապրումների պայթար: Աչքերի առաջ Մուսան էր, որի հետ մտքում սկսեց վիճել, ինչ որ բան ապացուցել, դժգոհել ... Չէ, կոտորածը հանգիստ չի տալիս, իր ազգի այս ողբերգությունը կլանել էր ողջ բանականությունը, հոգին : Չէ, Մուսայի նամակին չի պատասխանի. Մուսան կհասկանա, երեւի, որ ինքը ի վիճակի չէ, վերջին օրերին կատարված դեպքերը տակնուվրա են արել յուրաքանչյուր հայի հոգին... Հաջորդ մի քանի օրը լուռ էր, ինքն իր մեջ ամփոփված, ինքն իր հետ պայքարի մեջ: Սիրտն ու բանականությունը չէին կարողանում լեզու գտնել իրար հետ, երկուսն էլ ճիշտ էին, երկուսն էլ իրավունք ունեին իրենց տեսակետները առաջ քաշելու, երկուսի կարծիքն էլ արդարացի էր, նշած փաստերը՝ ապացուցված... այստեղ միայն ժամանակն էր անողոք. Պատմությունը կրկնվում է, դա էլ հենց պատմության ամենամեծ թերությունն է... Պատմությունն ու հայրենիքը կանչում են <իմ մարտ>...

Ու մոռացվեց շատ բան... ու պատերազմ սկսվեց...  
(Շարունակություն 1)

# Ժամանց

## 1- Ուրախ անկյուն

### ՄԻԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԸ

- Մենակ ես պատասխանեցի ուսուցչի հարցին,- դպրոցից տուն գալով պարծեցավ Վարդանիկը:  
- Իսկ ի՞նչ հարցրեց ուսուցիչը,- հետաքրքրվեց մայրը:  
- Հարցրեց, թե ո՞վ է կոտրել լուսամուտի շուշեքը:

### ԴԺԳՈՂՈՒԹՅՈՒՆ

- Վարդանիկ, բավական է անկարգություն անես, մի՞թե դպրոցում այդպես են դաստիարակում,- դժգոհեց մայրը:  
- Ես հո կրակը չեմ ընկել,- գայրացավ Վարդանիկը,- դպրոցում էլ ասում են՝ մի թե քեզ տանը այդպես են դաստիարակում:

### ԱՆՍՊԱՏԵԼԻ ՑԱՆԿՈՒԹՅՈՒՆ

Ընկեր Մարգոն աշակերտներին եքսկուրսիա է տանում արագածի գագա թը: Բարձրանալիս երեխաները հոգնում են: Ուսուցիչը տասը թույլ է ժամանակ է տալիս հանգստանալու համար, ապա սկսում է հարցեր տալ նրանց, թե ով ի՞նչ է դառնալու:  
- Ես այլինիստ կդառնամ,- ասում է Աշոտիկը:  
- Ես կուզեմ բժիշկ դառնամ,- վրա է բերում Արամիկը:  
- Իսկ ես, ընկեր Մարգո գուզեմ ետ դառնալ,- ասում է Վարդանիկը:

### ՁԱՅՐԱՑԱԿ

- Վարդանիկ ջան, ըսենք թե գնացիր Արփաչայ ու գելը հարձակվավ վրդ, ի՞նչ կենես,- հարցրեց մայրը:  
- Հրացանով կկրակեմ:  
- Հըբը որ հրացանը չբացվի՝  
- Դանակով կխփեմ:  
- Հըբը որ դնչով տա, ու դանակը ձեռնեդ ցած ընկնի:  
- Իյա, դու ի՞նչ մամն ես, թե գիլու,- գայրացավ Վարդանիկը:

### ՆԿԱՐՉՈՒԹՅԱՆ ԺԱՄԻՆ

Ուսուցիչը աշակերտներին հանձնարարեց մեկական ուռենու ծառ նկարել: Վարդանիկը մի քանի գիծ քաշեց եւ ներկայացրեց.  
- Սա ի՞նչ է, գարնացավ ուսուցիչը:  
- Ուռենու ծառ:  
- Ուր են ծյուղերն ու տերեւները:  
- Պապս պոկեց տարավ, որ ցախավել սարբե:

## 2- Արդյոք գիտե՞ք

Որպեսզի մանրած գետնախնձորը, որից պետք է ձիթաբլիթ պատրաստել, չսեւանա, լցրեք նրա վրա մի քիչ տաք կաթ կամ քերթեք գլուխ սոխ:  
\*\*\*

Եթե սուպը աղի է, պետք է նրա մեջ գցել հում գետնախնձոր եւ մի քիչ եփել: Կարելի է նաեւ սուպի մեջ պահել մի գդալ քացախով շաքար: Հենց շաքարը սկսի հալվել, հանել գդալը: Արդյունքում շաքարը ներս է քաշում աղը:  
\*\*\*

Մսի խաշուն պետք է աղ անել վերջնաեփից կես ժամ առաջ, ձկանը սկզբում, սունկինը ամենավերջում:

## 3. ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ

1- Երբ որ տեսնում ես՝ Նրան չես տեսնում: Երբ որ չես տեսնում՝ Տեսնում ես նրան:

2- Սեւ սատանան բեղն դլորեց, Հագար-հագարին գլորեց: Լոկ բուն մնաց ծառին թառած՝ Աչքը մկան բնին հառած:

3-

Դուռ չի բացում,  
Պատ չի ջարդում,  
Չի աղմկում,  
Չի դղրդում,  
Բայց ամեն օր՝ երեկոյան,  
Իր նույն ժամին մտնում է տուն:

4- Մի թուխ ամպեր, Մի լույս ախպեր Մեկ-մեկու չեն կարող հաղթել:

5- Մի ծառ գիտեմ մեծասաղարթ, Կեսն՝ սախտակ, Կեսն՝ սեւ: Կեսուն ոսկե հավթըն է ճախրում, Կեսուն՝ հավթերն արծաթե:

Պատասխան. 1-Մուրը 2- Գիշեր 3-Գիշեր 4-Գիշեր-ցերեկ 5-Գիշեր-ցերեկ,արեւ, լուսին, աստղեր

# Առողջապահական

## ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ԴԵՂԱՏՈՄՍԵՐ

Ամեն օր ոտքերը սառը ջրով լվանալուց հետո շփել կաղնու կեղեւի եփուկով: Դա կօզնի, որ ձեր ոտքերը չքրտնեն: Եփուկը պատրաստել արծնապատած կաթսայում, նրա մեջ լցնելով 2Օ գրամ մանրացված կաղնու կեղեւ եւ սենյակային ջերմությամբ 1 բաժակ ջուր: Կաթսան ծածկել եւ հանդարտ կրակի վրա կես ժամ եռացնել: Այնուհետեւ անմիջապես սառեցնել եփուկը եւ քամել, տարրալուծելով դարձյալ 1 բաժակ ջրի մեջ: Ստացված լուծույթը քսելուց հետո ոտվերը չլվանալ, չսրբել, այլ թողնել, որ չորանան:

\*\*\*

Գորտնուկները վերացնելու համար վերցնել գետնախնձորը, կտրել երկու մասի, մի մասը դեն նետել, իսկ մնացած մասի կտրված կողմը քսել գորտնուկներին, որից հետո հորել չոր տեղ: Մինչեւ հորած գետնախնձորը չորանալը գորտնուկները կանհետանան:

\*\*\*

Գորտնուկները վերացնելու ամենատարածված ձեւերից մեկը հետեւյալն է. գորտնուկներով պատած ոտքերը շոգեհարել խմելու սողայով եւ օժառով հագեցված ջրում: Չորացնելուց հետո մի փոքր կտոր հում միս դնել յուրաքանչյուր գորտնուկի վրա, սպեղանիով ամրացնել ու վիրակապել: Մի քանի օր վիրակապը չարձակել, որպեսզի վերքը չխոնավանա: Վիրակապը արձակելուց հետո կրկին ոտքերը շոգեհարել խմելու սողայով ու օժառաջրով, այնուհետեւ փափկած ու խորշոմած գորտնուկները հեռացնել անբողջ հյուսվածքից: Եթե գորտնուկները մեծ են եւ հեշտությամբ չեն անջատվում մաշկից, գործողությունը կրկնել:

\*\*\*

Մարմնի այրվածվը բուժելու համար մաշկի այրված մասը թրջել սառը ջրով եւ անմիջապես վրան շաղ տալ խմելու մաքուր սոդա:

\*\*\*

Այրվածքը բուժելու համար որպես լավագույն միջոց խորհուրդ է տրվում օգտագործել թարմ մեզր: Մարմնի այրված մասը անմիջապես թրջել թարմ մեզրով եւ առանց սրբելու թողնել, որ չորանա: